

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅ - ԻՐԱՔՅԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ԵՐԵՎԱՆ

25 -26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017

Անդրադառնալով 2013թ. Բաղդադում կայացած տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական հարցերով հայ-իրաքյան հանձնաժողովի 3-րդ նիստին և համաձայն 2013թ. նոյեմբերի 6-ին Երևանում Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության կառավարությունների միջև ստորագրված Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական համագործակցության համաձայնագրի հոդված 3-ին՝ 2017թ. սեպտեմբերի 25-26-ին Երևանում տեղի է ունեցել հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 4-րդ նիստը:

Իրաքյան կողմը գլխավորում էր Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ֆալահ Հասան Ջիդան ալ-Լուհայիբին, իսկ հայկական կողմը գլխավորում էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը: Իրաքյան պատվիրակության այցի ընթացքում Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ֆալահ Հասան Ջիդան Ալ-Լուհայիբին հանդիպումներ ունեցավ՝

- Ն.Գ. ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի,
- Ն.Գ. ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանի,
- Ն.Գ. ՀՀ գյուղատնտեսության նախարար Ի. Առաքելյանի,

- Ն.Գ. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Ս. Կարայանի հետ:

Երկու կողմերի պատվիրակությունների՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի ներկայացուցիչների անունները ներկայացված են Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

Հանդիպումները կայացան բարեկամական և ջերմ մթնոլորտում, ինչը լուրջ խթան հանդիսացավ կողմերի համար զարգացնելու և ամրապնդելու երկու երկրների միջև տնտեսական, առևտրային, կրթական և տեխնիկական հարաբերությունները:

Կողմերի համանախագահները կարծիքներ փոխանակեցին իրենց երկրների ներկայիս տնտեսական իրավիճակի վերաբերյալ և վերանայեցին երկկողմ առևտրային և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև՝ համատեղ համագործակցության զարգացման հեռանկարները: Կողմերը բարձր գնահատեցին բաժր հանձնաժողովի արդյունավետ հանդիպումները, որոնք գլխավորում էին համապատասխան երկրների փոխվարչապետները, ինչպես նաև 2016թ. Բաղդադում կայացած Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական հարցերով հայ-իրաքյան համատեղ հանձնաժողովի երրորդ նիստը:

Կողմերը համաձայնեցին, որ կարևոր է ստեղծել նոր պայմաններ՝ նպատակ ունենալով երկկողմ համագործակցությունը բարձրացնել նոր մակարդակի վրա՝ դրանով իսկ ընդգծելով համատեղ գործելու անհրաժեշտությունը՝ զարգացնելու և դիվերսիֆիկացնելու երկու երկրների միջև իրականացվող առևտրի ծավալը, ինչպես նաև համագործակցությունը տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական ոլորտների շրջանակներում:

Կողմերը քննարկեցին համագործակցության հետևյալ ոլորտները.

Համագործակցություն առևտրի ոլորտում

Կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդլայնելու և զարգացնելու առկա երկկողմ տնտեսական հարաբերությունները: Այս շրջանակներում երկու կողմերը համաձայնեցին.

- Իրախուսել միջազգային և հատուկ ցուցահանդեսների կազմակերպումը, ցուցադրել մի երկրի արտադրանքը մյուս երկրում և ապահովել անհրաժեշտ միջոցներ, աջակցություն և հնարավոր արտոնություններ:
- Իրաքյան կողմը հրավիրեց հայկական կողմին մասնակցելու Բաղդադի միջազգային ցուցահանդեսի գալիք նիստին, և հայկական կողմը ողջունեց այն:
- Կոչ անել հայտնի հայկական ընկերություններին ներդրումներ անել իրաքյան տարբեր նախագծերում, մասնավորապես պետական ընկերություններին՝ համաձայնեցնելով Իրաքի առևտրի նախարարության հետ:
- Երկու կողմերը համաձայնեցին Իրաքի առևտրի նախարարության հայտարարած աճուրդներին հայկական ընկերությունների մասնակցության վերաբերյալ, ապահովել առևտրային քարտեր այցելելով հետևյալ կայքեր (www.mot.gov.iq, www.iraqitic.com):
- Երկու կողմերը ընդգծեցին հայկական ընկերությունների և Իրաքի առևտրի նախարարության հետ կապված ընկերությունների միջև գործընկերության և համագործակցության կարևորությունը, հատկապես շինանյութերի պետական ընկերության և շուկայական կենտրոնների հետ: Համագործակցության ուղղությունները կքննարկվեն հետագայում:
- Հայկական կողմը հայտնեց իր պատրաստակամությունը իրաքյան կողմին ապահովել խորհրհրդատվություն՝ օգտվելու հայկական փորձից կենտրոնացված

տնտեսությունից շուկայական տնտեսության անցման նպատակով՝ կազմակերպելով աշխատանքային հանդիպումներ, դասընթացներ տեղեկատվության և փորձի փոխանակում այս ոլորտում:

- Երկու կողմերը համաձայնեցին խթանել համագործակցությունը մանր և միջին ձեռներեցության ոլորտում՝ հաշվի առնելով նրանց կարևոր դերը տնտեսական զարգացման գործընթացում և նրանց արդյունավետ նշանակությունը աշխատատեղերի ստեղծման հարցում և մեծացնել համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), քանի որ Իրաքի տնտեսական վերափոխման նպատակն է ակտիվացնել մասնավոր հատվածը և տալ դրան կարևոր նշանակություն տնտեսական զարգացման ոլորտում:

Առևտրի և գործարար համագործակցության ոլորտ

- Իրաքյան կողմը ցանկություն հայտնեց պարզեցնել առևտրական նպատակներով Իրաքի առևտրի պալատում գրանցված իրաքցի առևտրականների և գործարարների Հայաստան այցելելու ՀՀ մուտքի արտոնագրերի ստացման գործընթացը, որի համար Իրաքի առևտրի պալատի ֆեդերացիայի կողմից կմշակվեն երաշխավորագրեր, որոնք կտրամադրվեն Բաղդադում Հայաստանի դեսպանատանը: Հայկական կողմը խոստացավ պարզեցնել անհրաժեշտ մուտքի արտոնագրերի ստացման գործընթացը՝ ուսումնասիրելով յուրաքանչյուր հայցադիմումը:
- Կողմերը համաձայնեցին ամրապնդել երկու երկրների մասնավոր հատվածների միջև երկկողմ հարաբերությունները՝ երկկողմ այցելությունների և տարբեր տնտեսական միջոցառումներին մասնակցելու միջոցով:
- Կողմերը քննարկեցին Իրաքի արդյունաբերողների միության և հայկական համապատասխան կառույցի միջև միացյալ արձանագրության մշակման

հնարավորությունը: Այս առումով, իրաքյան կողմը հայկական կողմին է փոխանցել Իրաքի արդյունաբերողների միության և հայկական համապատասխան կառույցի միջև համագործակցության վերաբերյալ արձանագրության նախագիծը՝ ուսումնասիրելու և ամփոփելու Կողմերի համար ընդունելի տեքստը, որպեսզի այն ստորագրվի որքան հնարավոր է շուտ:

- Կողմերը համաձայնեցին հիմնադրել միացյալ գործարար խորհուրդ:
- Կողմերը համաձայնեցին փոխանակել երկու երկրների արտահանման ենթակա ապրանքների ցանկերը:
- Կողմերը պատրաստակամություն հայտնեցին աջակցել իրաքյան և հայկական կողմերի մասնավոր հատվածի միջև սերտ առևտրային և տնտեսական կապեր հաստատելուն՝ համատեղ գործողությունների իրականացմամբ հաստատելով վերջիններիս միջև գործարար կապեր:
- Կողմերը համաձայնեցին ընդլայնել և զարգացնել առևտրային համատեղ կենտրոնների ստեղծումը՝ ապրանքները երկու երկրների առևտրականներին ներկայացնելու նպատակով:

Ֆինանսական համագործակցություն

- Կողմերը համաձայնեցին զարգացնել բանկային հարաբերությունները երկու երկրների հեղինակավոր և հայտնի բանկերի միջև՝ տնտեսական գործունեությունը զարգացնելու և վերջիններիս միջև առևտուրն ընդլայնելու համար:
- Կողմերը համաձայնեցին դիվանագիտական խողովակներով սահմանել ժամկետ ուղիղ բանակցություններ համար՝ «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը

բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը նախաստորագրելու համար:

Ազատ առևտրի գոտիների ոլորտում համագործակցություն

- Իրաքի ազատ առևտրի գոտիների գլխավոր հանձնաժողովը և հայկական համապատասխան կառույցը համաձայնեցին փոխանակել տեղեկատվություն իրազակելեու միմյանց ազատ առևտրի գոտիների վերաբերյալ աշխատանքային մեթոդների մասին:
- Երկու կողմերը համաձայնեցին համագործակցել համատեղ գովազդային ծրագրերի իրականացման շուրջ ներդրողների և գործարարների կողմից ազատ առևտրի գոտիներում ներդրումներ կատարելու համար և կողմերի համար ստեղծել ներդրումային գրավիչ հարթակ:

Բանկային համագործակցություն

- Երկու կողմերը համաձայնեցին աջակցել ժամանակակից բանկային եւ ֆինանսական ներգրավման ոլորտում փոխգործակցության ընդլայնման միջոցներին:
- Երկու կողմերը համաձայնեցին խրախուսել շահագրգիռ կողմի միջև տեխնիկական փորձի փոխանակման վերաբերյալ երկու երկրներում, հատկապես Իրաքի Կենտրոնական բանկի և Հայաստանի Կենտրոնական բանկի միջև՝ դաշտային այցելությունների և գործնական գիտելիքների միջոցով զարգացնել գործունեությունը կենտրոնական բանկերում հստակ զարգացման աստիճանի հասնելու նպատակով: Մյու կողմից, իրաքյան կողմն առաջարկեց դասընթացներ

անցկացնել Իրաքի կենտրոնական բանկի աշխատակազմի համար: Հայկական կողմը հայտնեց իր պատրաստակամությունը ուսուցման դասընթացները կազմակերպելու առնչությամբ: Մանրամասները կուղարկվեն դիվանագիտական խողովակներով: Կողմերը համաձայնեցին քննարկել համագործակցությունը միջազգային ֆինանսական հաստատությունների միջոցով ֆինանսավորելու հնարավորությունը:

Ներդրումային համագործակցություն

- Կողմերը համաձայնեցին խրախուսել Իրաքի ներդրումների ազգային հանձնաժողովի և հայկական գործընկերների միջև համագործակցությունը, մասնավորապես կապված ներդրումներին առնչվող փորձի և տեղեկատվության փոխանակման հետ:
- Կողմերը համաձայնեցին խրախուսել երկու երկրների գործարարներին՝ ստեղծել համատեղ ձեռնարկություններ ներդրումների բոլոր ոլորտներում, հատկապես՝ ենթակառուցվածքների ոլորտում:
- Հայկական կողմը Իրաքի կողմին տրամադրեց տեղեկատվություն ՀՀ-ում ներդրումային միջավայրի մասին, ներառյալ Հայաստանում գործող տնտեսական գոտիները:

Համագործակցություն էներգետիկայի ոլորտում

- Կողմերը համաձայնեցին Իրաքի Հանրապետության էներգետիկայի նախարարության կողմից հայտարարվող ներդրումային ծրագրերին հայկական

ընկերությունների մասնակցության համար ներդրումների կամ այլ վճարների միջոցով:

- Կողմերը համաձայնեցին, որ հայկական կողմը մոտ ապագայում պատվիրակություն կուղարկի քննարկելու Հայաստանի Հանրապետությունից Իրաքի Հանրապետություն էլեկտրաէներգիա արտահանելու ներդրումային պայմանագրերի հնարավորությունը:
- Կողմերը պայմանավորվեցին, որ հայկական կողմը դիվանագիտական խողովակներով էներգետիկայի ոլորտում գործող հայկական ընկերությունների մասին լիարժեք տեղեկատվություն կփոխանցի Իրաքի Հանրապետության էներգետիկայի նախարարությանը նրանց հետ համագործակցելու համար:

Համագործակցություն պլանավորման ոլորտում

- Երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց ընդլայնել համագործակցությունը մարդահամարի կազմակերպման ոլորտում՝ կապված ցուցանիշների և տվյալների վերլուծության հետ, ինչպիսիք են գյուղատնտեսական և տնային տնտեսությունների հետազոտության իրականացման մեթոդները, որոնց մեջ ընդգրկվում է գյուղատնտեսական համատարած հաշվառումը:
- Օգտվել հայկական կողմի փորձից՝ արտաքին առևտրի տվյալների մշակման և զարգացման մեթոդներից և ուղիներից, որը տալիս է մանրամասն տեղեկատվություն արտահանված և ներմուծված ապրանքի ծավալների վերաբերյալ և, որը համարվում է առևտրի հաշվեկշռի պտրաստման պարտադիր պայման:

- Կողմերը համաձայնության եկան գիտական ոլորտում փորձի փոխանակման և ուսումնական դասընթացների և բոլոր ոլորտներում տեխնիկական փորձի փոխանակման նպատակով կրթաթոշակ տրամադրելու վերաբերյալ:
- Կողմերը պայմանավորվեցին համագործակցության և շփումների առանցքային հարցերի վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր ստորագրել հայկական կողմի կենտրոնների և կազմակերպությունների և իրաքյան կողմի համապատասխան գործունեություն ծավալող կառույցի՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, վարչատարածքային զարգացման, որակի կառավարման, ճգնաժամային կառավարման ռազմավարության և պլանավորման Իրաքի ազգային կենտրոնի հետ:
- Իրաքյան կողմը առաջարկեց օգտագործել Հայաստանի և Արժույթի միջազգային հիմնադրամի փորձը տարբեր տնտեսական ծրագրերի իրականացման համար, ինչը կնպաստի դրական զարգացմանը և գնաճի կանխմանը:
- Իրաքյան կողմը հորդորեց հայկական կողմին ապահովել անհրաժեշտ հարմարություններ Պլանավորման նախարարության և Սիներջի ընկերության միջև պայմանագիր կնքելու համար:
- Կողմերը պայմանավորվեցին համագործակցել և համակարգել գործողությունները ռեգիոնալ և տեղական զարգացման ոլորտում քաղաքաշինության կառավարման, գյուղական, գյուղատնտեսական, ապակենտրոնացված կառավարման և աշխարհագրական տեղեկատվության համակարգի միջոցով:
- Իրաքյան կողմը ցանկություն հայտնեց օգտագործելու 2005թ.-ից ՀՀ կառավարության կողմից տրամադրվող էլեկտրաէներգիայի կորստի դիմաց տրվող փոխհատուցման քաղաքականությունը, ինչպես նաև ծանոթանալու

Էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի մասնավորեցման հայկական փորձին:

- Իրաքյան կողմը ցանկություն հայտնեց ծանոթանալու ՀՀ կառավարության՝ գործազրկության հաղթահարմանն ուղղված քայլերին և ծրագրերին:
- Կողմերը պայմանավորվեցին համագործակցելու վեճերի հաշտեցման ոլորտում՝ համաձայն միջազգային իրավունքի:
- Կողմերը համաձայնեցին ընդլայնել համագործակցությունը Իրաքի ստանդարտացման և որակի հսկողության կենտրոնական կազմակերպության և Հայաստանի համապատասխան կառույցի միջև ապրանքների և արտադրանքների ստանդարտների, չափագրման, իրավաբանական ընդունման և համապատասխանության գնահատման ոլորտում:

Համագործակցություն արդյունաբերության և հանքային ոլորտում

- Կողմերը համաձայնեցին Իրաքի արդյունաբերության և հանքային ռեսուրսների նախարարության (www.industry.gov.iq) կողմից իրականացվող ներդրումային ծրագրերում հայկական ընկերությունների մասնակցության վերաբերյալ՝ գործընկերության սկզբունքով գործարանները վերականգնելու նպատակով:
- Կողմերը համաձայնեցին համագործակցել հետևյալ ոլորտներում՝ ինժեներություն, տեխնիկական փորձի փոխանակում, շինարարություն, փոքր և միջին ձեռնարկություններ, դեղագործություն և սննդի արդյունաբերություն, ջրազատման տեխնոլոգիաների զարգացում, այլընտրանքային էներգիա, ոսկերչություն և այլն:

Համագործակցություն տրանսպորտի ոլորտում

- Կողմերը համաձայնեցին շարունակել աշխատանքները նախկին պայմանավորվածությունների համաձայն և կազմակերպել պարբերական ուղիղ չվերթներ Հայաստանի և Իրաքի միջև՝ ներառելով իրաքյան գործող ավիաընկերություններ:
- Կողմերը համաձայնեցին կազմակերպել առանձին հանդիպումներ քաղաքացիական ավիացիայի մարմինների միջև՝ քննարկելու ավիացիոն ծառայության մասին համաձայնագրի նախագիծը:
- Իրաքի կողմը հայկական կողմին տրամադրեց սկավառակ, որը ներառում է Իրաքի տրանսպորտի նախարարության և նրա ընկերությունների 2017 թվականի ներդրումային ծրագրերը:
- Կողմերը քննարկեցին Իրաքի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ տարանցիկ փոխադրումների կազմակերպման հնարավորությունները Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով:
 - Կողմերը համաձայնեցին միջոցներ ձեռնարկել երկու երկրների միջև ուղևորափոխադրումների և բեռների փոխադրման ուղղությամբ, ինչպես նաև իրականացնել առանց խոչընդոտների տարանցիկ փոխադրումներ:
 - Կողմերը համաձայնեցին հնարավորինս շուտ Բաղդադում հանդիպում անցկացնել՝ Իրաքի տրանսպորտային ընկերությունների կողմից Իրաքի Հանրապետություն բեռների փոխադրման համար պիլոտային նախագծի վերաբերյալ հարցեր քննարկելու նպատակով:

Համագործակցություն արտակարգ իրավիճակների ոլորտում

- Հայկական կողմից Իրաքի օդերևութաբանության և սեյսմաբանության կազմակերպության աշխատակազմին վերապատրաստման դասընթացներ առաջարկելու հնարավորություն՝

- ինժեներական սեյսմաբանություն,
- սեյսմաբանություն և սեյսմիկ վտանգի գնահատում,
- եղանակի կանխատեսում,
- թվային կանխատեսում:

Համագործակցություն շինարարության և բնակարանային ապահովության ոլորտում

Կողմերը համաձայնեցին՝

- քննարկել հայկական կողմի մասնակցության հնարավորությունը Իրաքի վերակառուցմանը, մասնավորապես՝ բնակարանային, ճանապարհների, կամուրջների և հասարակական շենքերի ոլորտներում, ուղիղ մասնակցության կամ իրաքյան կողմի հետ համատեղ ձեռնարկությունների միջոցով (նախարարության կամ հատուկ հատվածի ընկերությունները),
- փոխանակել այցեր, ինժեներական և տեխնիկական փորձ՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ ու գիտական համաժողովներ և իրականացնելով փոխադարձ գիտական և կիրառելի հետազոտություններ՝ շինարարության և շինարարական նյութերի վերաբերյալ,

- փոխանակել տեղեկատվություն, հրապարակումներ և ընդհանուր տեխնիկական տվյալներ բնակարանների, ճանապարհների և կամուրջների շահագործման ձեռնարկների և համակարգչային ծրագրերի վերաբերյալ դրանցից օգտվելու նպատակով,
- համագործակցել պլանավորման ոլորտում,
- Հայկական կողմն առաջարկեց ջանքեր գործադրել՝ ուղղված երկու երկրների վարչատարածքային միավորների միջև ապակենտրոնացված համագործակցության խրախուսմանը,
- Իրաքի շինարարության և բնակարանաշինության նախարարությանը տրամադրել հաստատված պայմանագրային ընկերությունների անունները, որոնք կարող են մասնակցել Իրաքի վերակառուցման գործընթացին,
- Կողմերը քննարկեցին Իրաքի քաղաքների հատակագծերը թարմացնելու հնարավորությունը,
- Կողմերը պայմանավորվեցին վերապատրաստման դասընթացների միջոցով տեղեկատվություն փոխանակել կայաններում կոյուղաջրերի մաքրման մեթոդների վերաբերյալ:
- Կողմերը համաձայնեցին կազմակերպել փոխայցելություններ կոյուղաջրերի մաքրման կայաններ:

Համագործակցություն գյուղատնտեսության ոլորտում

Կողմերը համաձայնեցին վերապատրաստման դասընթացներ անցկացնել հետևյալ բնագավառներում.

- թունաքիմիկատների և բուսական ու մրգային մշակաբույսերի մեջ դրանց մնացորդների վերլուծության ժամանակակից մեթոդներ,
- թունաքիմիկատների օգտագործումը մոլախոտերի, հատկապես՝ ջրային տեսակների դեմ,
- Ծովային ձկների և ծովախեցգետինների բուծում և բազմացում:

Կողմերը համաձայնեցին իրականացնել փորձի փոխանակում գործունեության հետեյալ ոլորտներում.

- ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկա և անտառի վերականգնում,
- կաթիլային ոռոգման համակարգերի շահագործման մեջ այլընտրանքային էներգիայի և հորատանցքերի ջրերի օգտագործումը,
- չոր և կիսաչոր շրջաններում այգեգործական մշակաբույսերի տնկման ոլորտում և աղակալման, անապատացման և երաշտի դեմ հակազդման հայկական փորձի յուրացում,
- աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS) եւ հեռակառավարվող զոնդավորում (RS),
- Կողմերը համաձայնեցին առաջին իսկ հնարավորության դեպքում ստորագրել փոխըմբռնման հուշագիր երկու երկրների գյուղատնտեսության նախարարությունների միջև, որն առաջարկվել էր Իրաքի կողմից և հաստատվել Հայաստանի կողմից,
- Իրաքյան կողմը կոչ արեց հայկական ներդրողներին (անհատ ձեռներեցներ և ընկերություններ) ներդրումներ կատարել Իրաքի գյուղատնտեսական ոլորտում՝

օգտվելով Իրաքի՝ 2006թ. Ներդրումների մասին N 13 օրենքի արտոնություններից:

Կողմերը համաձայնեցին իրականացնել համատեղ համագործակցության հետևյալ ոլորտներում.

- օրգանական գյուղատնտեսություն, պահածոյացման մեթոդներ և մարքետինգ,
- գյուղատնտեսության զարգացման համար ապակե տների ժամանակակից տեխնիկաների օգտագործում:

Կողմերը համաձայնեցին փոխանակել գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի արտահանման և ընկերությունների արտադրանքի մասին տեղեկատվության՝ դրանցից օգտվելու համար:

- Կողմերը քննարկեցին Հայաստանում արտադրվող սննդամթերքի և գյուղմթերքի արտահանման հնարավորությունները:
- Նկատի ունենալով Հայաստանում իրականացվող կենդանիների «հալալ» մականշմամբ սպանող՝ կողմերը քննարկեցին Հայաստանից Իրաք մսի արտահանման, ինչպես նաև կենդանի գյուղատնտեսական կենդանիների արտահանման հնարավորությունները:
- Կողմերը անդրադարձան մեղրի, ձկան, սև խավիարի, ոչխարի և թռչնամթերքի (մասնավորապես՝ 3-5 հազար տոննա թռչնամսի) բանակցությունների արդյունքում պայմանավորված գներով արտահանման հարցերին:
- Կողմերը քննարկեցին հնարավորություն իրաքյան կողմին մատակարարելու երկրի բնական պայմաններին համապատասխան մշտական և ոչ մշտական պտուղներ, ինչպես նաև բանջարեղենի սերմեր Իրաքի բացօթյա և փակ գյուղատնտեսական տարածքների համար:

Համագործակցություն ջրային ռեսուրսների ոլորտում

- Կողմերը հայտնեցին իրենց պատրաստակամությունը խթանելու փոխադարձ համագործակցություն՝ ջրի մեջ աղի չափի նվազեցման ժամանակակից մեթոդների օգտագործման ոլորտում:
- Կողմերը համաձայնեցին փորձի փոխանակում իրականացնել հողերի աղազրկման տնտեսական և տեխնիկական իրագործելիության ուսումնասիրությունների, ծրագրերի բարելավման և մանրամասն նմուշների նախապատրաստման նպատակով:
- Կողմերը համաձայնեցին հայկական ընկերությունների մասնակցությանը Իրաքում հողերի աղազրկման ոլորտում իրականացվող ծրագրերում՝ հետաձգված վճարման կամ ներդրման միջոցով, որի մանրամասները կհստակեցվեն դիվանագիտական ուղիներով:
- Կողմերը համաձայնեցին խորացնել համագործակցությունը նաև ճահճացման դեմ պայքարի ոլորտում:
- Իրաքյան կողմն առաջարկեց ուսումնասիրել իրաքյան օրենքներն ու օրենսդրական դաշտը՝ ճահիճների պահպանության և պաշտպանության վերաբերյալ: Հայկական կողմը պատրաստակամություն հայտնեց տրամադրել համապատասխան խորհրդատվություն:
- Կողմերը համաձայնեցին համագործակցել ճահճային տարածքներում թռչունների հաշվառման և գրանցման ուղղությամբ:

Համագործակցություն կապի և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում

Կողմերը հայտնեցին իրենց շահագրգռվածությունը զարգացնելու և ամրապնդելու սպեկտրի կառավարման, հեռահաղորդակցման ծառայությունների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում երկու երկրների միջև գործունեության համակարգումը:

Հեռահաղորդակցում

- Կողմերը կարևորեցին երկու երկրների ջանքերի կոորդինացումը միջազգային ֆորումներում, մասնավորապես՝ Միջազգային հեռահաղորդակցության միությունում, արբանյակների և արբանյակային ալիքների տեղակայման գործում տեսակետները գուգամիտելու նպատակով շարունակական համակարգման անհրաժեշտությունը:
- Կողմերը պատրաստակամությունը հայտնեցին համագործակցել անլար ցանցային տեխնոլոգիաների պաշտպանության ոլորտում (WIMAX, LTE համար):
- Կողմերը համաձայնեցին, որ իրաքյան կողմը հայկական կողմին համառոտ կտեղեկացնի փոստի և օպտիկական ցանցերի ոլորտում մասնակցության և ներդրումների հնարավորությունների մասին:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

- Կողմերը քննարկեցին ահաբեկչական խմբերի կողմից կիբեր անվտանգության և հեռահաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ապօրինի օգտագործման դեմ պայքարում համակարգման հնարավորությունները:
- Կողմերը համաձայնեցին փորձի և տեղեկատվության փոխանակում իրականացնել կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների կիբեր պաշտպանության ոլորտում: Իրաքյան կողմը ցանկություն հայտնեց ծանոթանալու հաղորդակցության ոլորտում հայկական կողմի ունեցած անվտանգության ներուժին՝ ներառյալ տեղեկատվական տեխնիկաների, կիբեր

անվտանգություն և ռիսկերի կառավարման տեխնոլոգիաների վերջին կիրառումը:

- Կողմերը համաձայնեցին ընդլայնել համագործակցությունը էլեկտրոնային կառավարման ծառայությունների և սեփական ծրագրային համակարգերի զարգացման ոլորտում:
- Իրաքյան կողմը ցանկություն հայտնեց մասնակցել Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տվյալների փոխանցման համակարգերի, IMS կազմակերպությունների, ALL IP տեխնիկաների և վերգետնյա կայարանների արբանյակային տեխնոլոգիաներով գործող ցանցային համակարգերի, ինչպես նաև տվյալների բազաների (UNIX, SQL, SOLARIS և այլն) մասնագիտացված դասընթացների: Հայկական կողմը պատրաստակամություն հայտնեց ուսումնասիրել խնդիրը և անհրաժեշտ հրավերները ուղարկել իրաքյան կողմին:

Փոստային ծառայություններ

- Կողմերը համաձայնեցին համատեղ համագործակցել փոստային ծառայությունների ոլորտում և հնարավորություն ընձեռել ավելացնելու նախկինում գոյություն չունեցող փոստային ծառայություններ, ինչպես նաև ժամանակակից բիզնես համակարգեր՝ օգտագործված ներդրման ծառայությունների և տեսակետերի նախապատրաստման համար:

Համագործակցություն բարձրագույն կրթության ոլորտում

Կողմերը համաձայնեցին ընդլայնել և զարգացնել համագործակցությունը հետևյալ ուղղություններով.

- միջբուհական համագործակցության անմիջական կապերի հաստատում և զարգացում,
- միջբուհական համագործակցության շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների կարճաժամկետ ու երկարաժամկետ փոխանակման ծրագրերի իրականացում և ընդլայնում,
- կրթության համակարգի առանձնահատկություններին ծանոթանալու և հետագա համագործակցությունը զարգացնելու նպատակով փորձագիտական խմբերի փոխայցելություններ,
- կրթության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացում, ինչպես նաև համատեղ զարգացման ծրագրերի մշակում,
- միջպետական համագործակցության շրջանակներում «ռազմական բժշկություն» մասնագիտությամբ կրթաթոշակների տրամադրում:

Համագործակցություն առողջապահության ոլորտում

Կողմերը պայմանավորվեցին ակտիվացնել փոխգործակցությունը 2012թ. սեպտեմբերի 6-ին Երևանում երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև ստորագրված առողջապահության և բժշկական ծառայությունների ոլորտում փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

Մշակութային համագործակցություն

Կողմերը համաձայնեցին ամրապնդելու համագործակցությունը մաքսանենգ և գողացված մշակութային սեփականության ոլորտում՝ վերադարձնելու դրանք իրենց ծագման երկրներ՝ համաձայն միջազգային կոնվենցիաների:

Կողմերը ընդգծեցին մի շարք բանաձևերի կարևորությունը, մասնավորապես Միջազգային անվտանգության խորհրդի հետևյալ բանաձևը /no. 1483, 661 2199/, որը վերաբերում է Իրաքի մշակութային սեփականության պաշտպանությանը և վերականգմանը, որոնք մաքսանենգ ճանապարհով դուրս են բերվել 2003թ. հետո:

Կողմերը համաձայնեցին անցկացնել մշակութային և գեղարվեստական օրեր, ինչպիսիք են (Ֆիլմերի, երաժշտական շուկաների օրեր), որոնք կարտացոլեն երկու երկրների միջև պատմական և մշակութային կապերը:

Կողմերը քննարկեցին երկու երկրների մշակույթի նախարարությունների միջև փոխըմբռնման հուշագրերի ստորագրման հնարավորությունը:

Համագործակցություն տուրիզմի ոլորտում

Կողմերը համաձայնեցին կազմակերպել զբոսաշրջիկների, կրոնական եւ հնագիտական խմբերի համար ճանապարհորդությունների կազմակերպման, խրախուսել ճամփորդական եւ զբոսաշրջային գործակալություններին պատրաստել գովազդային եւ համատեղ՝ երկու երկրների զբոսաշրջիկներին գրավելու համար:

Փոխադարձ համաձայնություն ձեռք բերվեց ցուցահանդեսներին, կոնֆերանսներին, զբոսաշրջության շուկային և փառատոներին երկու երկրների փոխադարձ մասնակցության և զբոսաշրջային նախագծերի իրականացման համար երկու երկրների գործարարներին խրախուսման համար՝ գործող օրենսդրության համաձայն:

Կողմերը համաձայնեցին դասընթացներ կազմակերպել զբոսաշրջության եւ հյուրանոցների ոլորտում աշխատող Իրաքի անձնակազմի համար, որոնք կնպաստեն երիտասարդ անձնակազմի և Իրաքի զբոսաշրջության զարգացմանը:

Իրաքյան կողմը հայկական ընկերություններին կոչ արեց ներդրում անել զբոսաշրջության ոլորտում՝ օրենսդրության համաձայն:

Համագործակցություն երիտասարդության և սպորտի ոլորտներում

Կողմերը համաձայնեցին խթանել երիտասարդների մասնակցությունը կոնֆերանսների, ցուցահանդեսների, ֆորումների, աշխատաժողովների, սպորտային միջոցառումներին այն ինստիտուտների միջոցով, որոնք երկու երկրներում էլ զբաղվում են երիտասարդության և սպորտի հիմնահարցերով:

Կողմերը համաձայնեցին փոխանակվել սպորտի և երիտասարդության ոլորտում իրենց փորձով (փորձագետների և մարզիչների համար/), ինչպես նաև փոխանակվել վերապատրաստման ծրագրերով և աշխատաժողովներով գիտության և ֆիզիկական կրթության, սպորտի և մշակույթի ոլորտում:

Կողմերը համաձայնեցին համագործակցել սպորտային բժշկության ոլորտում և համակարգել երկու երկրներում իրավասու մարմինների միջև յուրաքանչյուր երկրում առկա փորձից օգտվելու նպատակով:

Իրաքյան կողմը ողջունել է հայկական ընկերությունների մասնակցությունը Իրաքում սպորտի և երիտասարդության հաստատություններ կառուցելու գործում:

Իրաքյան կողմը ցանկություն է հայտնել, որպեսզի հայկական ընկերությունները մասնակցություն ունենան սպորտի և երիտասարդության ոլորտի ներդրումներում:

Կողմերը համաձայնեցին երկու երկրների միջև ստորագրել փոխըմբռնման հուշագիր սպորտի և երիտասարդության ոլորտում: Հայկական կողմը կոչ է արել իրաքյան կողմին պատրաստել այն որքան հնարավոր է շտապ:

Համագործակցություն արտաքին գործերի ոլորտում

Երկու կողմերը համաձայնեցին դիվանագիտական աշխատանքի ոլորտում զարգացնելու համագործակցությունը Իրաքի արտաքին հարաբերությունների ինստիտուտի և հայկական համանուն հաստատության միջև:

Կողմերը շեշտը դրեցին միջազգային ոլորտում համակարգված տեսակետների կարևորության վրա, մասնավորապես ահաբեկչության և դրա ֆինանսավորման դեմ պայքարում, ինչպես նաև փոխադարձ աջակցություն ցուցաբերել միջազգային կազմակերպություններում թեկնածությունների առաջադրման ժամանակ:

Կողմերը քննարկեցին երկու երկրների տարածքում դիվանագիտական և ծառայողական անձնագրեր կրողների համար մուտքի արտոնագրի ձեռքբերման պահանջից ազատելու երկու երկրների կառավարությունների միջև համաձայնագրի ստորագրման հնարավորությունը:

Կողմերը համաձայնեցին Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել՝ դիվանագիտական խողովակներով ժամկետների վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ձեռք բերելուց հետո:

Կատարված և ստորագրված է Երևանում, 26 սեպտեմբերի, 2017թ., երկու բնօրինակից՝ անգլերեն լեզվով:

Հայկական կողմից փատաթուղթն ստորագրել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը:

Իրաքյան կողմից փատաթուղթն ստորագրել է Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Ֆալահ Հասսան Զիդան Ալ-Լուհայիբին:

Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 4-րդ նիստի հայկական պատվիրակության ցուցակ

1. **Ն. Գ. պարոն Դավիթ Լոքյան** – ՀՀ ՏԿԶ նախարար, հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ
2. **Ն. Գ. պարոն Ռոբերտ Հարությունյան** - ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ, հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահի տեղակալ
3. **Ն.Գ. պարոն Կարեն Գրիգորյան** – Իրաքի Հանրապետություն ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
4. **Պարոն Գագիկ Գրիգորյան** - ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ
5. **Պարոն Վահրամ Մկրտչյան** – ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
6. **Պարոն Արմեն Հարությունյան** - ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
7. **Պարոն Հայկ Հարությունյան** - ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
8. **Տիկին Գաբրիել Ղազարյան** - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
9. **Պարոն Սերգեյ Խաչատրյան** - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
10. **Պարոն Արմեն Ղուլարյան** - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

11. **Պարոն Արմեն Այվազյան** - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ
12. **Տիկին Լուսինե Քարամյան** - ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ
13. **Պարոն Օրի Ալավերդյան** - ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
14. **Տիկին Քրիստինե Գրիգորյան** – ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
15. **Պարոն Վահագն Աֆյան** – ՀՀ նախագահի աշխատակազմի արտաքին կապերի վարչության խորհրդատու
16. **Պարոն Մհեր Մկրտումյան** – ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի Մերձավոր և Միջին Արևելքի վարչության, Արաբական թերակղզու երկրների բաժնի պետ (հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի քարտուղար)

Հավելված 2

Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի 4-րդ նիստի իրաքյան պատվիրակության ցուցակ

1. **Պարոն Ֆալահ Հասսան Ջիդան Ալ-Լուհայիբին** - Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար, հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահ
2. **Պարոն Վալիդ Հաբիբ ալ-Մուսավի** – Առևտրի նախարարության գլխավոր քարտուղար, հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի համանախագահի տեղակալ
3. **Դոկտոր Ալիա Մահմուդ Սալման Ալ-Ջուբեյդի** – Հայաստանի Հանրապետությունում ԻՀ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար
4. **Պարոն Սալահ Ա. Մոզան** – Կառավարության քարտուղարության իրավական խորհրդատու
5. **Պարոն Վալիդ Մ. Խալիդ** – Արտաքին գործերի նախարարություն, իրաքյան կողմի քարտուղար
6. **Պարոն Աբդուլամիր Կ. Մոզան** – Տրանսպորտի նախարարություն
7. **Պարոն Մուհամմադ Հ. Մուստաֆա** – Ֆինանսների նախարարություն
8. **Պարոն Նազար Ա. Միզալ** – Առևտրի նախարարություն
9. **Պարոն Ջավադ Ա. Ֆայիդալլահ** – Առողջապահության նախարարություն
10. **Պարոն Սաբահ Բ. Աբդելռեհա** – Ջրային ռեսուրսների նախարարություն
11. **Պարոն Սադիկ Մ. Հասան** – Բնակարանաշինության և շինարարության նախարարություն
12. **Պարոն Իբթիսամ Բ. Ալի** – Իրաքի կենտրոնական բանկ

13. **Պարոն Զիյադ Ս. Ալի** – Էներգետիկայի նախարարություն
14. **Պարոն Ահմեդ Մ. Սալեհ** – Կապի նախարարություն
15. **Պարոն Նասիմ Ա. Աբդալլահ** – Գյուղատնտեսության նախարարություն
16. **Պարոն Աբդուլբարիմ Շիթ** - Գյուղատնտեսության նախարարություն
17. **Պարոն Մահմուդ Աբդալհասան** – Իրաքի առևտրաարդյունաբերական պալատների ֆեդերացիա